ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻՑ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ժողովին մասնակցում էին 42 մարդ.
/ Ձեկ. համայնքի ղեկավար Շ. Կարապետյան./

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց 2013 թ. ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:

Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2013 թ. բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, նշելով, որ անցած տարում զգալի դրական աշխատանք է կատարվել եկամուտների հավաքագրման ուղղությամբ՝ հիմնական շեշտը դնելով սեփական եկամուտների հավաքագրման վրա: Մասնավորապես նշվեց, որ 2013 թվականի բյուջեի կատարողականը եկամուտների գծով կազմում է 105.0 %, որից սեփական եկամուտների կատարողականը՝ 124.0 %:

Այն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում.

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՆԱԽԱՏԵՍՎԱԾ հազ. դրամ	ՓԱՍՏԱՑԻ հազ. դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	52545.9	55152.4	105.0
ՈՐԻՑ՝ ՍԵՓԱԿԱՆ	10977.3	13583.8	124.0
ԱՅԴ ԹՎՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿ	3560.0	5577.1	156.7
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	6728.0	7258.3	107.9
ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ	225.0	225.2	100.1
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	451.0	502.5	111.4
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	13.3	20.7	155.6

Այնուհետև համայնքի ղեկավար Շ.Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2013 թ. ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացված հիմնական աշխատանքներին, այն է՝

1. Մետաղապլաստե դռների և պատուհանների տեղադրում «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի մի հատվածում և հանգստյան խաղասենյակում:
2. Գյուղապետարանի շենքի հատակի սալիկապատում:
3. Կոմիտաս փողոցի ճանապարհի մի հատվածի ընթացիկ նորոգում,

2. Գյուղապետարանի շենքի հատակի սալիկապատում:
3. Կոմիտաս փողոցի ճանապարհի մի հատվածի ընթացիկ նորոգում, Կոմիտաս և Թումանյան փողոցների մի հատվածի հիմնանորոգում:
4. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում և «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում կազմակերպված տարատեսակ միջոցառումներին:
5. Համայնքում ամանորի նախօրեին տոնական լուսավորության անցկացում:
6. Ամանորի առթիվ շուրջ 300 երեխաների բաժանվել են տոնական նվերներ:
7. Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի սակավ ապահովված ընտանիքներին:
8. Վերանորոգվել է «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի երկրորդ հարկի մի հատվածը և գյուղապետարանին կից բնակիչների հանգստի կազմակերպման խաղասենյակը:

Այնուհետև համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը նշեց, որ համայնքում դեռևս առկա են շատ չլուծված հիմնախնդիրներ, որոնց լուծման համար դրամական մեծ ներդրումներ են պահանջվում, որը համայնքը ի զորու չի լուծելու իր համեստ միջոցներով, այն է՝

ա/ հիմնական վերանորոգման ենթակա մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի անբարեկարգ վիճակը:

բ/ դպրոցի մարզադահլիճի բացակայությունը:

Համայնքի ղեկավարը միաժամանակ նշեց, որ խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ համայնքում տարեցտարի մեծանում է չմշակվող գյուղատնտեսական հողերի տեսակարար կշիռը, որը ներկայումս կազմում է շուրջ 85%, որի պատճառներից է հողերի ցածր բերրիությունը, ոռոգման ցանցի անբարեկարգ վիճակը և այլն:

Միակ դրականը այն է, որ ներկայումս աշխատանքներ են տարվում համայնքի խմելու ներտնտեսային ջրագծերի արդիականացնելու ուղղությամբ:

Նախատեսվում է արդիականացնել հան համայնքի ոռոգման ջրագծերի ներտնտեսային ցանցի մի հատվածը:

Ելույթ ունենալով համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն Վ. Քոչյանը, մանկապարտեզի տնօրեն Ս.Ասատրյանը, Նորակերտի բուժ ամբուլատորիայի տնօրեն Հ. Աղախանյանը և մյուսները, որոնք առանձնակի շեշտեցին այն ուշադիր վերաբերմունքը որը դրսևորվում է համայնքի ղեկավարի կողմից իրենց հիմնարկներում կազմակերպված բոլոր միջոցառումների հանդեպ:

Համայնքի ղեկավար Շ. Կարապետյանը վերջում հավաստիացրեց, որ չնայած առկա դժվարություններին ամեն ինչ կարվի հնարավորին չափով լուծելու համայնքի առջև ծառացած խնդիրները:

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ